Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ
Armenian Territorial Development Fund

N 2420-Ա «12» 10 2026թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ

«ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ԻՆ ԵՎ «ՎԱՂԺԱՆ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Լեգենդ Քնսթրաքշն» ՍՊԸ և «Վաղժան» ՍՊԸ կոնսորցիումի (այսուհետ՝ Կապալառու) միջև 04.08.2025թ.-ին կնքված N ՀՏԶՀ-ԱԲՄ-ԱՇՁԲ-2025/12-1 կապալային աշխատանքների կատարման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), որով Կապալառուն պարտավորվել է իրականացնել ՀՀ Արարատի մարզի Այգավանի բժշկական ամբուլատորիայի և ՀՀ Արարատի մարզի Նոր Կյանքի բժշկական ամբուլատորիայի կառուցման շինարարական աշխատանքները:

Պայմանագրի 1.3-րդ կետի հիման վրա 25.12.2025թ. կողմերի միջև կնքվել է թիվ 1 համաձայնագիրը, որով սահմանվել է աշխատանքների կատարման համար 180 օր ժամկետ՝ սկսած տվյալ համաձայնագրի ստորագրման պահից: Պատվիրատուի 22.01.2026թ. գրությամբ նշվել է, որ Պայմանագրով նախատեսված շինարարական աշխատանքները թույլատրվում է սկսել 2026 թվականի հունվարի 26-ից:

Այսպես, Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման մեկնարկը տրվել է 26.01.2026 թվականին, իսկ 25.12.2025թ. թիվ 1 համաձայնագրով վերջնաժամկետ է սահմանվել 180 օրացուցային օր: Թեև 25.12.2025թ. թիվ 1 համաձայնագրով աշխատանքների կատարման ժամկետի հաշվարկը մեկնարկել է 25.12.2025թ., սակայն որպես նշված ժամկետի հաշվարկի սկիզբ հիմք է ընդունվել Պատվիրատուի կողմից աշխատանքների թույլատրության պահը՝ 26.01.2026թ.: Սակայն, փաստացի շինարարական աշխատանքները սահմանված 180-օրյա ժամկետում՝ մինչև 25.07.2026թ. չեն ավարտվել:

Պայմանագրի 3.1.4 կետի բ) ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը(ներառյալ օրացուցային գրաֆիկը):

Տվյալ դեպքում Պայմանագրով նախատեսված աշխատանքները 25.07.2026 թվականի դրությամբ ամբողջությամբ չեն կատարվել և չեն ավարտվել և Կապալառուն խախտել է շինարարական բոլոր աշխատանքների կատարման և ավարտման համար Պայմանագրով սահմանված 180-օրյա ժամկետը: Այսինքն՝ Կապալառուն էականորեն խախտել է Պայմանագրի 3.1.4 կետի բ) ենթակետի պահանջը:

Պայմանագրի 6.2 կետի դրույթով, որը սահմանում է, որ պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

25.07.2025 թվականի դրությամբ չկատարված աշխատանքի արժեքը 1-ին չափաբաժնով կազմում 130 540 912 ՀՀ դրամ, 2-րդ չափաբաժնի մասով կազմում է 149 038 718 ՀՀ դրամ :

Ղեկավարվելով Պայմանագրի 6.2-րդ և 3.1.4-րդ կետերով **29.09.2026 թվականից Պայմանագիրը միակողմանի լուծվել է** և «Լեգենդ Քնսթրաքշն» ՍՊԸ և «Վաղժան» ՍՊԸ կոնսորցիումի նկատմամբ կիրառվել է տույժ՝

1-ին չափաբաժնով՝ **3 002 441** ՀՀ դրամի չափով (130,540,912x0,0005x46), որից 83, 367 ՀՀ դրամ գումարը հաշվանցվել է, իսկ մնացորդը կազմում է **2 919 074** ՀՀ դրամ,

2-րդ չափաբաժնով՝ **3 427 891** ՀՀ դրամի չափով (149 038 718x0,0005x46):

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակվել է 2026 թվականի սեպտեմբերի 30-ին:

Պայմանագիրը միակողմանի լուծելուց հետո՝ 01.10.2026 թվականին պայմանագրի ապահովումները՝ բանկային երաշխիքը 12,434,000 ՀՀ դրամի և տուժանքի մասին համաձայնագիրը 19,994,603.6 ՀՀ դրամի չափով ներկայացվել են «Արմսվիսվանկ» ՓԲԸ-ին կատարման:

Պայմանագրի ապահովման բանկային երաշխիքը՝ 12,434,000 ՀՀ դրամի չափով բանկի կողմից կատարվել է իսկ տուժանքի մասին համաձայնագիրը 19,994,603.6 ՀՀ դրամի չափով չի կատարվել:

1. <u>Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝</u>

- 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի Օրենսդիրը սահմանել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու դեպքերն, այդ թվում՝ «Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, **եթե խախտել է պայմանագրով նախատեսված** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած **պարտավորությունը,** որը հանգեցրել է **պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը** կամ գնման գործընթացին տվ ալ մաւնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով **սահմանված ժամկետում չի վճարել** հայտի, **պայմանագրի** և (կամ) որակավորման **ապահովման գումարը:»,**

- 6-րդ հոդվածի 2-րդ մասի «2. Սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: **Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է** գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ **պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում:»,**

2. Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 29-րդ ենթակետի «օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը լիազորված մարմինը հրապարակում է տեղեկագրում՝ որոշումը ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում: **Ընդ որում, սույն ենթակետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կա ացնում** է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ **պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հա տարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը**: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: (...)»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի, Կարգի 32-րդ կետի 29-րդ ենթակետի, պահանջներով և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.

Գնման ընթացակարգի				Մասնակցի				Պատվիրատուի անվանումը	Իրավական հիմք	Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝
ծածկագիրը	չափաբաժնի			Անվանումը	ՀՎՀՀ	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայման ներին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը			
	համարը	անվանումը	գնման գինը /ՀՀ դրամ/							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
ՀՏՋՀ-ԱԲՄ-ԱՇՁԲ-2025/12-1	1, 2	ՀՀ Արարատի մարզի Այգավանի բժշկական ամբուլատորիայի և ՀՀ Արարատի մարզի Նոր Կյանքի բժշկական ամբուլատորիայի կառուցման շինարարական աշխատանքներ	253 776 000	«Լեգենդ Քնսթրաքշն» ՍՊԸ և «Վաղժան» ՍՊԸ	00200833 00156229	Ք. Երևան, կոմիտասի պող. 5 Ք. Երևան, Պռոշյան 1 նրբ., 62/2 տ.	30.09.2026	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդված, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 29-րդ ենթակետ	Առկա չէ

2. Սույն որոշումը կայացվելուն հաջորդող օրը տրամադրել լիազոր մարմնին և դրա մասին ծանուցել «Լեգենդ Քնսթրաքշն» ՍՊԸ-ին և «Վաղժան» ՍՊԸ-ին:

ԳՐՈՒԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԿԱՏԱՐՈՂ՝ **Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ**